ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/32343-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-881-09.07.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը՝

1. Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 15-րդ հոդվածի վերնագրից առաջարկում ենք հանել «ու հաշվառման համար վճարի սահմանումը և վճարման» բառերը:
   Նախագծի 1-ին հոդվածով ուժը կորցրած են ճանաչվում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-ից 6-րդ մասերը, որոնք վերաբերում են ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի զննման եւ ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար տնտեսավարող սուբյեկտից գանձվող վճարին: Օրենքի 15-րդ հոդվածը վերնագրված է՝ «Ներմուծվող սննդամթերքի եւ կենդանական ծագման մթերքի զննման եւ ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար վճարի սահմանումը եւ վճարման կարգը»: Հիմք ընդունելով Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությամբ վճարման կարգին վերաբերող իրավակարգավորումների ուժը կորցրած ճանաչվելը, անհրաժեշտություն է առաջանում խմբագրել օրենքի 15-րդ հոդվածի վերնագիրը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը:

2. Նախագծի 1-ին հոդվածում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքին տրվել է կրճատ անվանում՝ «(այսուհետ՝ Օրենք)»: Մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում և 3-րդ մասի 2-րդ կետում կիրառված «սույն Օրենք» ձևակերպումը կարող է անհստակություն առաջացնել «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի և «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի տարանջատման տեսանկյունից: Հետևաբար՝ առաջարկում ենք Նախագծում կիրառված հղումների հստակությունն ապահովելու նպատակով «սույն Օրենք» ձևակերպումները փոխարինել «սույն օրենք» ձեւակերպմամբ:
3. Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:
4. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ներմուծվող սննդամթերքի ու կենդանական ծագման մթերքի զննման ու ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար սահմանված վճարի մասով մինչեւ սույն Օրենքի ուժի մեջ մտնելը պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձն իրականացվում է՝ վճարողի կամ նրա իրավահաջորդի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում: Ուստի առաջարկում ենք հստակեցնել վերադարձնելու իրավունքի առաջացման օրը՝ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնելով նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն մասի իմաստով պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օր է համարվում ավել վճարելու կամ ավել գանձելու օրը, ամիսը, տարին:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ